

## Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման հանգամանքները 1913 թ. (Գեվորգ Ե Սուրենյանցի աթոռակալության տարիներին)

Ամիրջանյան Հասմիկ Հ.

ավագ գիտաշխատող, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՏԳ՝ 93.94;

EDN: HRRBYA; DOI: 10.58587/18292437-2023.3-47

Հանգուցաբառեր՝ հայկական կոտորածներ, ռուսական կառավարություն, բարենորոգումներ, Արևմտյան Հայաստան, թուրքական կառավարություն, Ամենայն հայոց կաթողիկոս, պետական գործիչներ, Հայկական հարց

### Обстоятельства осуществления реформ в Западной Армении в 1913 г. (в годы патриархата Геворга Сууренянца)

Амирджанян Асмик О.

Старший научный сотрудник, кандидат исторических наук,

Институт истории НАН РА (Ереван, РА)

amirjanyan.hasmik@rambler.ru

**Аннотация.** В статье представлены усилия Католикоса Всех Армян, направленные на проведение реформ в Западной Армении в 1913 г. Первоочередной основой для методологического исследования работы послужили письма и доклады, рапорта деятелей этого периода, методологией сопоставления, сравнения и анализа содержащихся в них материалов была предпринята попытка еще раз выявить основные мотивы Армянского вопроса выявить который по-прежнему актуален и не получил своего решения.

В 1908 г., когда в Османской империи младотурки пришли к власти, преследование армян не прекращалось. Начиная с начала апреля 1909 г. турки организовали погромы армян Киликии.

Католикоса всех армян Геворга V, сыгравшего большую роль в раскрытии Армянского вопроса в 1912, получает информацию из разных источников о массовых убийствах армян в Западной Армении. Католикос обратился к разным европейскими и российскими государственными военным и общественным деятелям с просьбой предотвратить резню западных армян. Он пытается через европейских и русских деятелей, а также через российских и европейских послов Константинополя заставить Турцию провести реформы в Западной Армении. Католикос прилагает большие усилия, чтобы добиться благосклонности российского императора. С этой целью он устанавливает переписку с наместником Кавказа Воронцовым-Дашковым.

С другой стороны, Католикос направляет обращения к европейским государственным деятелям. Он считает, что реформы должны осуществляться Россией и контролироваться Европой. В конце концов, программа составляется, но из-за начавшейся мировой войны она не реализуется. А европейские державы и российское правительство руководствуясь собственными интересами ограничивались лишь дипломатическими шагами и обещаниями.

**Ключевые слова:** Погром армян, турецкое правительство, реформы, Западная Армения, Католикос всех армян, государственные деятели, Армянский вопрос, делегация

### Circumstances of the implementation of reforms in Western Armenia in 1913 (during the patriarchy of Gevorg Surenyants)

Amirjanyan Hasmik H.

Senior Researcher, Candidate of Historical Sciences, Institute of History of the

National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

amirjanyan.hasmik@rambler.ru

**Abstract.** The article presents the efforts of the Catholicos of All Armenians to carry out reforms in Western Armenia in 1913. The primary basis for the methodological study of the work was letters and reports by figures of that period by the methodology of comparison, comparison and analysis of the materials contained in them, an attempt was made again to identify the main motives of the Armenian question, which is still actual relevant and has not received its solution.

In 1908 after the abolition of Abdul-Hamidian despotic regime and the hold of powers by Young Turks the pursuits and cruelties against Western Armenians did not cease. Beginning from the April in 1909 the Turks organized The Massacre of the Armenians of Cilicia.

of Catholicos of All Armenians Gevorg V, who played a great role in the discovery of the Armenian question in 1912 receives information about the massacre of Armenians in Western Armenia from various sources. Catholicos appealed to various state and public European and Russian statesmen and figures with a request to prevent the massacre of Western Armenians. He tries to force European and Russian figures, as well as Russian and European ambassadors of Constantinople, to force Turkey to carry out reforms in Western Armenia. The Catholicos is making great efforts to gain the favor of the Russian emperor. To this end, he establishes correspondence with the governor of the Caucasus Vorontsov-Dashkov.

On the other hand, the Catholicos directs appeals to European statesmen. He thinks that reforms should be implemented by Russia and controlled by Europe.

In the end, the program is being drawn up, but because of the outbreak of the world War, it is not being implemented. But the European countries and the Russian government guided by their own interests were limited only to diplomatic steps and promises.

**Keywords:** The Massacre of the Armenians, the Turkish government, reforms, The Western Armenia, Catholicos of All Armenians, statesmen, the Armenian question, delegation

1908 թ. իշխանության գալով, երիտթուրքական կառավարությունն էլ ավելի մեծացրեց բռնություններն ու չարաշահումներն արևմտահայության նկատմամբ՝ որդեգրելով հայ ազգաբնակչությանը ոչնչացնելու քաղաքականություն: Արևմտյան Հայաստանից եկող լուրերը գուժում էին հայերի հողերի բռնագավթումների, թուրքական բանակում ծառայող հայ զինվորների ծանր վիճակի, սաստկացած և բռնի ուժով հավաքվող հարկերի, հողային հարցի, հայերի նկատմամբ քաղաքական ու կրոնական հալածանքների և այլնի մասին [1, էջեր 37-42; 12, էջ 238; 2, էջ 204]:

1912 թ. բալկանյան ժողովուրդների՝ Բուլղարիայի, Սերբիայի, Չերնոգորիայի և Հունաստանի ազատագրական պայքարը (Բալկանյան առաջին պատերազմ, 1912 թ. հոկտ. 8 (9) - 1913 թ. մայիսի 30) Թուրքիայի դեմ նոր հույսեր արթնացրեց հայության մեջ: Նախադրյալներ էին ստեղծվել Հայկական հարցի վերարժարման համար, որի իրագործման նախապայման է դառնում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդիրը, ինչը մեծապես շաղկապվում է եվրոպական պետություններ և Ռուսաստանի հետ, որոնք, որպես մեծ տերություններ, ի գործու կլինեին ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա:

Այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն է ծավալում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն, որը մեծ ներդրում ունեցավ Հայկական հարցի վերաբացման հարցում: Նա այդ նպատակով 1912 թ. նոյեմբերի 10-ի թիվ 1482 կոնդակով խնդրել էր եգիպտահայ հայտնի բարերար Պողոս Նուբար փաշային (1851-1930), որպես ազդեցիկ և հեղինակավոր անձնավորության, լինել Եվրոպայում կաթողիկոսի լիազոր և հայության ներկայացուցիչն առաջիկայում կայանալիք վեհաժողովում՝ կոնֆերանսում (Բալկանյան պատերազմի ավարտից ու խաղաղության դաշինք կնքելուց հետո պատերազմի արդյունքներն ամփոփելու նպատակով Լոնդոնում գումարվելու էր մեծ տերությունների վեհաժողով): Պողոս Նուբարն առաքելություն ուներ՝ խնդրել մեծ տերությունների

ներկայացուցիչներին՝ նպաստել, որպեսզի արևմտահայությանը տրվեն մարդկային ամենատարրական իրավունքներ՝ կյանքի, գույքի, պատվի, ազատ քաղաքակրթվելու հաստատուն երաշխիքներ [7, թ. 12; 10, էջեր 5-6]: Այդ հարցում կաթողիկոսի հետ մեծ հույսեր էին կապում հայ քաղաքական ու հասարակական շրջանակները: Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի<sup>1</sup> 1913 թ. փետվարի 23-ի նամակում՝ ուղղված կաթողիկոսին շեշտվում է, որ հայոց կաթողիկոսն է «այսօր ճանաչում Հայոց դատի պաշտօնական իրաւատերը» և նրա ընտրած պատվիրակի քայլը դիտվում է որպես կաթողիկոսի գործունեություն [3, էջ 139]:

Այնուհետև կաթողիկոսը 1912 թ. աշնանից սկսած՝ բազմաթիվ նամակներ է հղում Կովկասի կառավարչապետ կոմս Իլարիոն Վորոնցով-Գաշկովին (1837-1916)՝ վերջինիս միջոցով փորձելով դիմել ռուսական Նիկոլայ Երկրորդ կայսրին (1894-1917)՝ խնդրելով նրա միջամտությունը Հայկական հարցի լուծմանն ի նպաստ: Գևորգ Ե-ն շեշտում է, որ բարենորոգումներ իրականացնելու իրական երաշխիքը Ռուսաստանի հովանավորությունն է, եթե վերջինս ստանձնի Հայկական հարցի պաշտպանությունն առաջիկա վեհաժողովում և Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման պատասխանատվությունը: Ընդ որում, կարևոր էր կաթողիկոսի այն դիրքորոշումը, ըստ որի գերադասելի էր, որ բարեփոխումների ծրագիրը նախապատրաստվեր Սան-Ստեֆանոյի 16-րդ, այլ ոչ 61-րդ հոդվածին հարի<sup>2</sup>:

<sup>1</sup> Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրոն ձևավորվել է 1912 թ. հոկտեմբերին՝ ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումարի խորհրդակցության արդյունքում: Նպատակն էր օգտվել 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված իրադրությունից և հասնել Հայկական հարցի լուծմանը: Բյուրոյի կազմում էին հայ ազգային գրեթե բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Տիրապետող դիրքում էր դաշնակցությունը: 1917 թ. դադարում է գործելուց:

<sup>2</sup> 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցը քննության առարկա դարձավ Սան-

Կաթողիկոսը 1912 թ. հոկտեմբերի 2-ին Էջմիածնի Մինոդի անդամ Մեսրոպ Եպիսկոպոսին հատուկ կոնդակով ուղարկում է Պետերբուրգ, որտեղ նա հանդիպումներ է ունենում ռուսական մի շարք պետական գործիչների (այնտեղ գտնվող Ի. Վորոնցով-Դաշկովի, նախարարների խորհրդի նախագահ Վլադիմիր Կոկովցևի (1911-1914), արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովի (1910-1916) հետ [12, էջ 233-234; 3, էջ 100-101; 9, էջ 134]:

Կ.Պոլսի ռուսական դեսպան Միխայիլ Գիրսը (1911-1914) նոյեմբերի 26-ին իր կառավարությանը տեղեկացնում է, որ Գևորգ կաթողիկոսը Կովկասի փոխարքայի միջոցով դիմել է Ռուսաստանին և խնդրել իր հովանավորության ներքո առնել արևմտահայությանը: Ռուսական գործիչը շեշտում է, որ հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման համար պետք է ստեղծել ամուր երաշխիքներ՝ դնելով այդ բարեփոխումները ռուս կամ եվրոպական գործակալների վերահսկողության ներքո [4, էջ 306]:

1912 թ. դեկտեմբերի 22-ին Վորոնցով-Դաշկովը Թիֆլիսից Գևորգ Ե-ին հղած իր գրության մեջ նշում է, որ կաթողիկոսի խնդրանքը ներկայացվել է կայսրին, և կարծիք է հայտնվել, որ արևմտահայության ծանր վիճակն ու քրդերի ճնշումները հետևանք են Թուրքիայում վարչական անկազմակերպության: Հետևաբար, թուրքական կառավարությանը դիմում է հղվել և կոչ արվել անմիջապես և լրջորեն զբաղվել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների և Թուրքիայի վարչակարգը բարելավելու հարցերով [2, էջ 111]:

Մյուս կողմից, կաթողիկոսն աշխատում էր հայկական բարենորոգումների հարցը բարձրաձայնել եվրոպական տերությունների առջև: Նրա առաջարկով Պողոս Նուբարի կողմից Եվրոպայի տարբեր մայրաքաղաքներում ստեղծվում են երևելի օտարներից բաղկացած «հայասեր կոմիտեներ», ինչը շատ օգտակար և հայանպաստ եղավ: Դրանցից Լոնդոնի, Փարիզի կոմիտեները, որոնց անդամակցում էին անգլիական, ֆրասնիական պետական գործիչներ, ժողովներ գումարեցին, ինչի արդյունքում ամրագրվեց, որ հայկական բարենորոգումների խնդիրը արդարացի, դրական և օրինական է:

Այնուհետև Գևորգ Ե-ն Պողոս Նուբարն ուղարկում է հուշագրի օրինակ, որը պետք է ներկայացվեր մեծ տերություններին, իսկ Եվրոպայում գտնվող հայ գործիչներին խորհուրդ է

տալիս միահամուռ գործունեության արդյունքում արևմտահայերի, Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի հայերի համատեղ ուժերով կազմել բարենորոգումների ընդհանուր ծրագիր [3, էջեր 105-106]:

Այդ ընթացքում, 1912 թ. դեկտեմբերի սկզբին, թուրքական կառավարությունը երկյուղ կրելով, որ Հայկական հարցը կարող էր առիթ հանդիսանալ ռուսական կառավարության միջամտության, փորձեց համաձայնություն ձեռք բերել հայերի հետ՝ առաջարկելով բարենորոգումների իր ծրագիրը, որը, սակայն, բացի մի շարք թերություններից, չէր ենթադրում եվրոպական մջամտություն և տարածվելու էր միայն հայկական չորս (Վան, Խարբերդ, Բիթլիս, Դիարբեքիր), այլ ոչ վեց (Վանի, Էրզրում, Բիթլիս, Սեբաստիա, Դիարբեքիր, Խարբերդ) նահանգների վրա [5, էջ 161]:

Կաթողիկոսն, անհանգստացած այդ քայլից, դեկտեմբերի 24-ին հերթական անգամ դիմելով ռուսական կայսրին, խնդրում է, որ առաջիկա կոնֆերանսում բալկանյան խնդիրների հետ միասին քննության առվի նաև հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը [3, էջեր 105-106]: Այնուհետև պատվիրակություն է ուղարկում Թիֆլիս՝ փոխարքայի հետ հանդիպման: Դեկտեմբերի 26-ին հայ ներկայացուցիչները ներկայանում են Վորոնցով-Դաշկովին: Վերջինս ծանոթանալով կաթողիկոսի գրությանը, նշում է, որ Ռուսաստանն այժմ չի կարող մուտք գործել Թուրքիա և գրավել, քանի որ պայմանները նպաստավոր չեն, հետևաբար կաթողիկոսն արևմտահայության հարցով առայժմ չպետք է դիմի Լոնդոնի խորհրդաժողովին [3, էջեր 114-118]:

Հայ ներկայացուցիչների խնդրանքով կառավարչապետը կաթողիկոսին հղվելիք գրության մեջ կետ է ավելացնում, որ գոնե ռուսական կառավարությունը Օսմանյան կայսրությունում իր դեսպանի և հյուպատոսների միջոցով վերահսկողություն սահմանի արևմտահայության նկատմամբ: Նշվում է նաև, որ 61-րդ հոդվածի իրագործումը Ռուսաստանի կողմից հաջողությամբ իրականացնելու նպատակով նախ պետք է կաթողիկոսը պատգամավորություններ ուղարկի եվրոպական պետություններ, որպեսզի «դիպլոմատիկական շրջաններում տրամադրութիւն ստեղծուի յօգուտ ռուսական նախաձեռնութեան և կոնտրոլի» [3]: Իսկ Պողոս Նուբարից ևս պահանջվում էր «յաջողացնելու Ռուսաստանի նախաձեռնութեամբ եւ կոնտրոլի տակ ըեֆորմներ մտցնել տալու Տաճկահայաստանում» [3, էջեր 115-117]:

Այսպիսով, հետևելով ռուսական կառավարության խորհրդին, Գևորգ Ե-ն 1913 թ. հունվարի 4-ին Պողոս Նուբարին կոչ է անում եվրոպական դիվանագիտական շրջանակներում

Ստեֆանոյի կոնֆերանսում (ընդունվեց 16-րդ հոդվածը), սպա Բեռլինի վեհաժողովում (16-րդ հոդվածը վերափոխվեց 61-րդի): Բեռլինի 61-րդ հոդվածով նախատեսվում էր բարենորոգումներ Բ. Դեան կողմից՝ վեց պետությունների վերահսկման ներքո:

նպաստավոր տրամադրություն ստեղծել, որպեսզի Ռուսաստանի կառավարությունն ստանձնի Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու նախաձեռնությունը և դրանց վերահսկողությունը՝ մեծ տերությունների համաձայնությամբ [8, թ. 22; 3, էջեր 115-117]:

Սակայն դեռևս 1913 թ. հունվար-փետրվար ամիսների կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունից պարզ է դառնում, որ ռուսական կողմի ընդառաջումները սահմանափակվում են լոկ խոսքով՝ «բարեացակամության և համակրության տարտամ արտայայտությանց մէջ» [3, էջեր 134-135; 10, էջեր 13-14], ինչը կաթողիկոսի մոտ մտավախություն է առաջացնում, որ Բ. Դուռը, օգտվելով ռուսական կողմի տրամադրվածությունից, խույս կտա բարենորոգումներից:

Չնայած դրան, կաթողիկոսը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի հարցի լուծման համար առկա են նպաստավոր պայմաններ: Նրա հրահանգով 1913 թ. մարտ-ապրիլ ամիսներին Պողոս Նուբարը Եվրոպայում հանդիպումներ է ունենում Ա. Իզվոլսկիի<sup>3</sup>, ֆրանսիական, գերմանական և անգլիական պետական գործիչների, այդ թվում՝ ֆրանսիայի արտգործնախարար Ստեֆան Պիշոնի (1857-1933) հետ [3, էջ 146; 10, էջեր 13, 16-17, 23-26]:

1913 թ. ապրիլի 29-ին Նուբարը գրում է կաթողիկոսին, որ Եվրոպական երկրների ներկայացուցիչները կարծիք են հայտնում, որ Հայոց հարցն աջակցություն կգտնի մեկ պայմանով, երբ այն լուծվի վեհաժողովին մասնակից Եվրոպական բոլոր պետությունների վճռով, այլ ոչ թե մեկ [3, էջ 153]: Բնականաբար, Եվրոպական գործիչները նկատի ունեին Ռուսաստանին, որը հայկական կողմի համար դիտվում էր բարենորոգումների հարցում առաջնային:

Նման պայմաններում հայկական կողմը սահմանափակում է իր պահանջները՝ հասկանալով, որ բարենորոգումների ծրագիրը միանձնյա ոչ ոք չի ստանձնի, իսկ 16-րդ հոդվածի վերաբերյալ խոսք լինել չի կարող:

Ինչ վերաբերվում է Բ. Դուռն խոստումներին, ապա կաթողիկոսը հավատ չէր ընծայում թուրք պաշտոնյաներին և կառավարությանը: Բայց նա հասկանում էր, որ անհնարին է միանգամայն ձեռնպահ մնալ օսմանյան կառավարության հետ հարաբերություններից, քանի որ Եվրոպական պետությունների կարծիքով «բարենորոգումները չեն կրնար ըլլալ Թուրքիոյ դեմ, այլ անոր հետ» [3, էջեր 136-137]:

Այսպիսով, ակնհայտ էր, որ Եվրոպական պետությունները հետամուտ էին Ասիական Թուրքիայի ամբողջականության և ստատուս-քվոն (նախապատերազմյան վիճակ) պահպանմանն ու վերջինի սնանկության կանխմանը, իսկ հայկական բարենորոգումները Եվրոպացի գործիչները կարևորում էին այնքանով, որքանով դրանք կնպաստեին այդ քաղաքականության իրականացմանը [10, էջ 23]:

Նման պայմաններում միակ նպատակահարմար ելքը կաթողիկոսը տեսնում էր Ս.Պետերբուրգի հավանությանն արժանացած ծրագրի վավերացման և Եվրոպական վեց պետություններին (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա) հանձնելու մեջ: Կաթողիկոսը, սակայն հասկանում էր, որ նման դեպքում անհրաժեշտ էր Եվրոպայում բոլոր, այդ թվում ռուսական դեսպանների հետ լավ հարաբերություններ վարել, բայց զգուշությամբ և հեռատեսությամբ, որպեսզի Եվրոպական մյուս պետությունները թշնամաբար չտրամադրվեն: Դա բխում էր նրանից, որ կաթողիկոսը Եվրոպական որոշ պետությունների, հատկապես Անգլիայի և Ավստրիայի դիրքորոշումը համարում էր պակաս հայանպաստ [3, էջեր 163-164, 185-186]:

Այսպիսով, Լոնդոնի վեհաժողովում, որի արդյունքում 1913 թ. մայիսի 30-ին կնքված պայմանագրով ավարտվեց Առաջին Բալկանյան պատերազմը, այդպես էլ չքննարկվեց Հայկական հարցը, քանի որ ժողովը նման լիազորություն չունեց: Սակայն կաթողիկոսի մտտեցումը, այն է՝ դիմել ուղղակի պետություններին առանձին-առանձին, դրական ներգործություն ունեցավ [10, էջ 34]: Նմանապես դրական նշանակություն էր ունեցել կաթողիկոսի հրահանգը՝ Եվրոպայի հանրության կարծիքը նախապատրաստել Հայկական հարցի վերաբերյալ՝ բանախոսությունների և լրագրական հրատարակությունների միջոցով:

Այդ ընթացքում կաթողիկոսն իր անհամաձայնությունն է հայտնում գերմանական ծրագրի դեմ. այն է՝ հայկական վեց վիլայեթները մեկ նահանգի վերածելու փոխարեն դրանց միացնել նաև Տրապիզոնը և Էրզրումի վիլայեթի հյուսիսային սահմանից մինչև Սվազի հարավային սահմանը, դրանք բաժանել երկու մասի, նշանակել երկու ընդհանուր քննիչ, պահպանել վալիների պաշտոնը [3, էջեր 192-193]: Կաթողիկոսի համոզմամբ նման ծրագրի իրագործման արդյունքում հայկական բնակավայրերում թուրքական տարրը ստվարանալու էր և բարենորոգումների ծրագիրը խափանվեր, մանավանդ, եթե քննիչները նշանակվեին թուրքերի կողմից:

Հետևաբար, ըստ Գևորգ Ե-ի, գերմանական և թուրքական ծրագրերին հակընդեմ կարող էր

<sup>3</sup> Ալեքսանդր Իզվոլսկի (1856-1919), ռուս պետական գործիչ, Ռուսաստանի դեսպանը Փարիզում (1910-1917):

լինել միայն ռուսական ծրագիրը, քանի որ ռուսական դիվանագիտությունը բանավոր և գրավոր հուսադրել էր հայերին:

Ի վերջո, Գևորգ Ե-ն Պողոս Նուբարից տեղեկանում է, որ փոխհամաձայնություն է կայացել, հատկապես Ռուսաստանի և Գերմանիայի միջև, և մնում է միայն, որ Բ.Դուռն այն ընդունի և գործադրի [10, էջ 51]: Պողոս Նուբարը կաթողիկոսին առաջարկում է Սազոնովին մղել՝ ռուսական ծրագիրը համաձայնեցնել նաև ֆրանսիացիների հետ, և ստիպել Բ. Դուռն՝ իրականացնել բարենորոգումները [3, էջ 201]:

1913 թ. նոյեմբերի 17-ին Գևորգ Ե-ն Պողոս Նուբարին գրում է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից պարզ երևում է, որ թե՛ իր շահերի, թե՛ իր քաղաքական հեղինակության տեսանկյունից ռուսական կողմին ձեռնադր են հայկական բարենորոգումները: Իսկ դրա հիմնական հակառակորդը «եռապետական դաշնակցութեան»<sup>4</sup> ներկայացուցիչ Գերմանիան էր: Այնինչ Թուրքիան ամեն ինչ անում է՝ բացառելու եվրոպական պետությունների վերահսկողությունը, առանց որի կաթողիկոսի համար այդ ծրագիրը «միմիայն խոսքեր են» [10, էջ 59]: Իսկ եթե ընդհանուր նահանգապետը եվրոպացի չլինի, ըստ նրա բարենորոգումների ծրագիրը «համարեա մեռած տառ կմնայ...» [3, էջ 187]: Դրանից խուսափելու համար, ըստ Գևորգ Ե-ի, եվրոպական պետությունները պետք է ճնշում գործադրեն՝ ստիպելով, որ թուրքական կառավարությունը համաձայնվի բարենորոգումների իրականացմանը: Ըստ կաթողիկոսի, այդ ճնշումը պետք է լիներ հատկապես տնտեսական [10, էջեր 59-60]:

Կաթողիկոսի համար բարենորոգումների ամենախելամիտ և գործնական ձևը եվրոպական վեց պետություններից կազմված միջազգային վերահսկիչ խմբի (կոնտրոլ, հակակշիռ) տեղակայումն էր բուն Հայաստանում կամ հայաբնակ տաշաձքներում, ինչը կապահովեր բարենորոգումների իրագործումը և կկանխեր օսմանյան կայսրությունում խռովությունների առկայությունը: Կաթողիկոսը համոզված էր, որ թուրքական կառավարությունն ամենաշատը վախենում էր այն երևույթից, որ միջազգային վերահսկիչ հանձնախումբը կհաստատվեր բուն Հայաստանում [10, էջեր 59-60]:

Գևորգ Ե-ն գտնում էր, որ եթե ըստ ռուսական ծրագրի վեց հայաբնակ վիլայեթների համար նշանակվեր մեկ ընդհանուր լիազոր նահանգապետ՝ վեց պետությունների դեսպանների համաձայնությամբ, ապա միջազգային վերահսկող հանձնաժողովի՝ Կ.Պոլսում գտնվելն այնքան վնասակար կամ ձևական չէր լինի: Բայց

քանի դեռ Գերմանիայի առաջարկությամբ մտադրություն կա Տրապիզոնի վիլայեթի միացումով հայկական նահանգները բաժանել երկու մասի (ստվար մահմեդական տարրով) և յուրաքանչյուր մասի համար նշանակել մեկական քննիչ՝ վեց պետություններ համաձայնությամբ, այս այս դեպքում անհրաժեշտ և ցանկալի է միջազգային վերահսկիչ կետի՝ բուն Հայաստանում գտնվելը [3, էջեր 187, 213; 10, էջեր 59-60]:

Կաթողիկոսի կարծիքով ռուսական շահերի համար ևս կարևոր է այդպիսի մի վերահսկիչ մարմնի գոյությունը Ռուսական սահմանին մոտ (հատկապես Վանում և Էրզրումում), ինչի շնորհիվ այդ տարածքներում առավել քան Կ.Պոլսում, համեմատաբար գորեղ կլինի ռուսական ազդեցությունը: Իսկ բարենորոգումների ծրագրի անհաջողությունը կլիներ Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության կատարյալ պարտություն: Նա Միքայել Պապաջանյանին<sup>5</sup> խնդրում է ռուսական արագործնախարարության ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա և բարենորոգումներ ծրագրերի վերաբերյալ մի շարք փաստաթղթեր է ուղարկում՝ ներկայացնելու Վ. Կոկովցևին [3, էջ 212]:

Ի վերջո, Թուրքիայի և Ռուսաստանի 1914 թ. հունվարի 26-ի (փետրվարի 8) համաձայնությամբ ընդունվեց Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարենորոգումների ծրագիր, ըստ որի Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու նահանգի, յուրաքանչյուրում տեղական իշխանությունների գործունեությունը և բարենորոգումների իրագործումը վերահսկելու համար մեծ տերությունների կողմից նշանակվում էր գեներալ-տեսուչ (ընդհանուր վերահսկիչ):

Կաթողիկոսը մասնավոր կոնդակով Պողոս Նուբարին հանձնարարում է տեսակցել դեռևս Եվրոպայում գտնվող երկու քննիչների<sup>6</sup> հետ, ինչի արդյունքում Պողոս Նուբարը տեղեկանում է, որ Թուրքիան նրանց պայմանագիր էր պարտադրել, որով իրավունք էր ստանում անհրաժեշտ դեպքում պաշտոնագրկել նրանց [3, էջեր 259, 260-262]:

1914 թ. հուլիսի 28-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը փաստացի խոչընդոտեց նշանակված քննիչների այցին Արևմտյան Հայաստան:

Այսպիսով, Գևորգ Ե-ն հասկանալով, որ արտաքին ճնշումը միակ միջոցն է՝ ստիպելու

<sup>4</sup> 1882 թ. ձևավորվել էր եռյակ դաշինք՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մասնակցությամբ:

<sup>5</sup> Միքայել Պապաջանյան (1868-1929), հայ քաղաքական, հասարակական գործիչ, հայ ժողովրդական կուսակցության անդամ, Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի անդամ:

<sup>6</sup> Հաստատվել են քննիչներ հոլանդացի Վեստենենկը (երկար տարիներ պաշտոնավարած հոլանդական Հնդկաստանում իբրև կուսակալ) և և նորվեգացի Հոֆը (գինվորական):

Թուրքիային իրագործել բարենորոգումներ, փորձում էր Եվրոպայի ու Ռուսաստանի ուշադրությունը բևեռել այդ հարցի վրա: Այնինչ եվրոպական պետությունները հայկական բարենորոգումները դիտելով որպես երաշխիք Թուրքիայի ամբողջականության պահպանման և տնտեսական բարգավաճման համար, հետևողական չեղան այդ հարցում:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման համար կաթողիկոսի պայքարը շարունակվեց նաև 1914 թ. և դրանից հետո, սակայն ըստ ամենայնի արդյունք չտվեց: Սակայն նրա գործունեությունը նպաստեց, որ ևս մեկ անգամ վերհանվի Հայկական հարցը, որն առ այսօր մնում է արդիական և սպասում է իր լուծմանը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա.,** 1965, Մարդկությունը չպետք է ների, Բանբեր Հայաստանի արխիվների, N 1 (10), էջ 34-106:
2. **Աղայան Ծ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, ՀՍՍՀ ԳԱ հրատ:
3. **Բեհրուդեան Ս.,** Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գեորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), 2005, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, տպ. Մուղնի, Երևան:
4. **Լեօ,** հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, տպարան Ն. Աղանեանցի
5. **Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ.,** Հայաստանը միջազգային դիվանագիտության և և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, (1828-1923), փաստ. Ժող., Երևան, 1972, «Հայաստան» հրատ.:
6. Հայաստանի Ազգային արխիվ, ֆ 57, ց. 5, գ. 55
7. Հայաստանի Ազգային արխիվ, ֆ 57, ց. 5, գ. 19
8. Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, Ե., 2015, էջ 134:
9. **Հովսեփյան Է.,** Պողոս Նուբար փաշա, վավերագրեր, Ե., 2021, հեղինակային հրատարակություն
10. **Ներսիսյան Մ.,** Նյութեր հայկական կոտորածների մասին, Պատմաբանասիրական հանդես, 1965, թիվ 1, էջ 86-100
11. **Нерсисян М.** Геноцид армян в Османской Империи. 1982. Сборник документов и материалов под ред., Ереван, изд. Айастан

*Տճանա/Հանձնվել է՝ 13.06.2023*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 16.06.2023*

*Принята/Ընդունվել է՝ 19.06.2023*